## 7. ԱՍՏՈԾ ՈՂՈՐՄԱԾ Ա / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուգարք (Լոռի), Լոռու բարբառ (խոսվածք)

Ըլում են, չեն ըլում՝ էրկու զարգյար. մինը՝ հայ, մեկելը՝ ջհուդ: Սրանք մի քաղքում իրար կշտի բանելիս են ըլում: Հայը մի քյասիբ մարթ ա ըլում, հմա աստծու ճամփին: Ամեն ըիգուն-ռավոտ աղոթք անելիս ու ասելիս ա ըլում. «Աստոծ ողսրմած ա»:
Ինչ քամբախտութին էլ նրան ռաստ գա, էլի չի մտահան անում իրա խոսքը, թե. «Աստոծ ողորմած ա»:
Ջհուդն ուզում ա, որ մի հանքով հայի գլխին մի փեթերակ բերե ու տենու, թե էնդով էլ միտը կպիե իր «աստոծ ողորմած ա»-ն թե չէ:
Մի դոնում թգավորն ուզում ա մատնուք շինել տա ու կանչում ա մեր հայ զարգյարին: Թգավորը տալիս ա նրան ոսկի, էրծաթ ու անգին քար:
— Է՛ս քե ոսկի, է՛ս քե էրծաթ, էս էլ քե անգին քար,— ասում ա թգավորը,— վե կալ ու իրեք օրի վրա թե մատնուքը բերիր՝ խիստ լավ, թե բերիր ոչ՝ լավ իմացած կաց, որ գլուխդ ուսիդ տուն չես գնալու:
Զարգյարը գլուխ ա տալիս թգավորին, վե կալնում ոսկին, էրծաթն ու անգին քարը, տուն գալի: Ուստեն գալիս ա դուքանը, էդ բաները դնում դազգի վրեն ու աշկերտին ասում. «Լա՛վ օրոն արա, աչքիդ լսի պես պիե, հեչվելը եդ գամ. թե որ մի բան կորել ա սրանցից՝ թգավորի սուրն ա՝ մեր գլուխը»:
Դու մի՛ ասիլ ջհուդը իր դուքանից անկաջ ա դնում, իմանում, ինչոր նրանք ասում են: Բուսու ա պիում, հենց որ ուստեն հեռանում ա, նա տուն ա մտնում, աշկերտին զրցով անում, նրան թլրսմորում, անդին քարը վե կալնում ու դուս գնում: Աշկերտն էդ բրավրդ չի անում: Շատ ա անց կենում, թե քիչ, ուստեն եդ ա գալիս ու ոսկին ու անգին քարն ուզում: Աշկերտը տալիս ա ոսկին ուստին, հմա անգին քարը՝ ինչ զադար ման ա գալիս, գդնում չի: Է՛ս պուճախ, է՛ն պուճախ, դե՛ս անգին քար, դե՛ն անգին քար, չէ՛, կա ոչ: Եբ տուն ու դուռ մանդալեն չաններուն հասնում ա, ուստեն մելնումուդարեն աստծուն ա անում ու ասում, «Է՛հ, աստոծ ողորմած ա»:
Ջհուդն էլ մթա թե դրդարար ա լիս ընգնում, գալիս ա մին-մին նրա դուքանը, ախ ու վախ անում ու սրտումն ուրախանում: Ջհուդը տանում ա անգին քարը գձում անտակ ծովի մեչը: Հենց ջուրը գձելն ևետ մի ձուգը կուլ ա տալիս էդ անգին քարը: Մի թոռչի ա ըլում ծովի ափին, թոռը գձում ձուգը բռնում, բերում ա քաղաք ծախսելու:
Խեղճ զարդյարն էլ ամեն տեղից մելումուդարին կտրած, տենում ա, որ վրա իրեք օրն ա, որդիան որ ա, պետք ա թգավորի մարդիքը գան ու իրան տանին, որ գլուխը տան, հվաքում ա իրա հրևաննուն ու բարեդամնուն, մի լավ սուփրա սարքում, որ մի լավ քեֆ անեն իր եդի օրին: Ամեն բան առած ա ըլում, աստծու անհատ բարին վեր ա բերում սուփրում, հմա թաժա ձուգը չեն ունենում: Հենց էդ սհաթին ճամփեննի մի ձուգը ծախող ա անցկենալիս ըլում:
Ախչիկը որ տենում ա, ասում ա մորը.— Նա՛նի, նա՛նի, իմ հերը ամեն բան առել ա, մենակ թաժա ձուգն ա պակաս, արի՛ թաժա ձուգն էլ առնունք:
Ձուգն առնում են, փորը ճղում, լվանալիս տենում են, որ անգին քարը ձգան փորումը: Էս որ տենում են մեր ու ախչիկ՝ ոտներուն տեղիցը կտրվում ա:
Ախչիկն ալախ-մալախ վազում ա, ընգնում հոր խտիտը.— Աստո՛ծ ողորմած ա, ապի ջա՛ն, աստո՛ծ ողորմած ա:
— Աստո՛ծ ողորմած ա, որդի՛ս, եթե ես մեռնելու ըլիմ, ողորմած աստոծը քեզ հերութին կոնե. մեկին աստոծ ո՛չ կորցնե, բանդեն ի՞նչ պտի անել:

Զարգյարը տուն ա մտնում, ի՛նչ տենում՝ իր կնգա ձեռին անգին քարը։ Խելքը գլխիցը թռչում ա, ուզենալիս չի ըլում, որ աչքերին ու ընգաջնուն հվատա։ Հմա որ անգին քարը շափաղ-շափաղ ա անում, ռեգնակի պես փելփլին տալիս, նոր հվատում ա ու ջնաթաթախ «աստո՛ծ ողորմած ա» ասում։
Ծնգնահացը դառնում ա հրսանքահաց։ Ուտում են, քեֆ անում, աստծուն փառք տալիս։ Ուստեն սաղ գիշերը միալար բանում ա. էգսի օրը մատնուքը հազիր անում ու տանում թգավորի ամարաթը։
Ջհուդը որ էդ բանը իր աչքովը տենում ա, մնում ա մայիլ էլած։ Վերջը գալիս ա հայ զարգյարի կուշտը, մեղքը խոստովանում, թե՝ բաս չես ասիլ, ես եմ անգին քարը վե կալել ու անտակ ծովը գձել, հմի տենում եմ, որ ձեր աստոծը ողորմած ա։ Ջհուդը մկըրտվում, դառնում ա հայ, հեչվել իրա գերեզմանը մտիցը գձեր ոչ, թե. «Աստոծ ողորմած ա»։